ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մարտի 29-ին տեղի ունեցավ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը: Ժողովին ներկա էին ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանը, ՀՀ կրթության և գիտության նախարար Ս. Երիցյանը:

ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը հանգես եկավ «Հիմնական արդյունքներ: Գիտության զարգացման միտումները և հեռանկարները Հայաստանում» զեկուցումով: Նա ասաց, որ 2004 թ. մեր երկրի տնտեսական հետագա զարգացումը լուրջ նախադրյալներ ստեղծեց գիտության նկատմամբ պետության կողմից ավելի հոգատար վերաբերմունք ցուցաբերելու համար: Դա նպաստեց միջազգային գիտական, դոնոր տարբեր կազմակերպությունների հետ հարաբերությունների զարգացմանը: Միևնույն ժամանակ դրական դեր խաղացին նաև Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 60-ամյակին նվիրված միջոցառումներին մասնակցելու համար Երևան ժամանած պատվիրակությունների հետ հանդիպումները, ինչպես նաև Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի և այլ երկրների գիտությունների ակադեմիաների ու գիտական կազմակերպությունների հետ դիտական կապերի հետագա զարգացումը: Անվիճելի է ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանի արտահայտած սկզբունքային մտքի կարևորությունը. «Մենք հռչակել ենք կազմակերպված պետության կառուցման գաղափարը: Հայաստանը պետք է ունենա ժամանակակից գիտական նվաճումների վրա հիմնված արդյունաբերություն, տարածաշրջանում դառնա դիտական մտքի կենտրոն»:

Առանձնապես պետք է նշել, շարունակեց զեկուցողը, ԱՄՆ Ազգային գիտահետազոտական խորհրդի կողմից գործուղված ամերիկացի մասնագետների հանձնախմբի մեծ աշխատանքը, որի նպատակն էր ուսումնասիրել և վերլուծել Հայաստանի գիտատեխնիկական համակարգի ներկա վիճակը և զարգացման հեռանկարները: Հանձնախմբի զեկուցման մեջ նշված է, որ «...չնայած բոլոր դժվարություններին՝ Հայաստանի գիտնականները պահպանել են իրենց բարձր որակավորումը և դրամական միջոցների խիստ սահմանափակության պայմաններում հասել տպավորիչ արդյունքների»: Նշվել է նաև, որ «այսօր առավել քան երբևէ գիտությունը և տեխնիկան վճռորոշ նշանակություն ունեն Հայաստանի ապագայի համար»: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ հանձնախումբը առաջարկություններ է կատարել, որոնց կենսագործումը կարող է նպաստել Հայաստանի գիտական և գիտատեխնիկական ներուժի իրացմանը: Զափազանց կարևոր է, որ գիտական և գիտատեխնիկական գործունեության բարեփոխումների առաջարկվող հիմնադրույթներն առաջին հերթին ուղղված են գիտությանը և գիտատեխնիկական գործունեությանը վերաբերող ՀՀ օրենքներից,

ենթաօրենսդրական ակտերից և նորմատիվ փաստաթղթերից բխող գործողությունների անվերապահ կատարմանը:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, նշեց ԳԱԱ պրեզիդենտը, բազմիցս ներկայացրել է իր առաջարկությունները գիտության ոլորտում բարեփոխումներ կատարելու ուղղությամբ, որոնց իրականացումը, հիմնականում, պետք է նպաստի ստացվող գիտական արդյունքների նպատակասլաց օգտագործմանը ինչպես երկրի սոցիալ-տնտեսական, այնպես էլ ժողովրդի գաղափարական, կրթական մակարդակը բարձրացնելու գործում: Այնուհետև զեկուցողը ներկայացրեց հայ գիտնականի և գիտական կառույցների առջև դրված այն խնդիրները, որոնք առաջնահերթ են և իրենց հետագա գործունեության մեջ էական դեր են խաղալու: Դրանցից են՝ գիտական հաստատությունների գործունեության ձևերի և բնույթի վերակառուցումը, գիտական մտքի ռացիոնալ տեղաբաշխումը, առաջավոր երկրների գիտատեխնիկական ներուժի մեջ ակտիվորեն ու արդյունավետորեն ինտեգրվելը և այլն: Այս ամենի հետ, նկատեց Ֆ. Սարգսյանը, մենք ինքներս ստեղծել ենք արհեստական պատնեշներ, որոնք խանգարում են մեր գիտական հաստատությունների ինքնազարգացմանն ու ինքնակատարելագործմանը: Այսպես, գիտական հաստատություններին տալով ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ, փաստորեն, դրանց զրկել ենք սեփական գիտական մշակումների շուկայական իրացման և հետագա ինքնազարգացման ու ինքնակատարելագործման հնարավորություններից, որին նպաստում է նաև մեր իսկ կանոնագրության անկատարությունը և ինովացիոն քաղաքականության վերաբերյալ օրենքի բացակայությունը: Եթե մեր երկիրն անցել է շուկայական տնտեսվարության, ապա օրենքները պետք է նպաստեն դրա զարգացմանը, և ոչ թե խանգարեն: Նույն վիճակում են գտնվում նաև մեր մի շարք ինստիտուտներ, որոնք մեծ հնարավորություններ ունեն սեփական մշակումների անմիջական իրացման հիման վրա ապահովելու իրենց զարգացումն ու կատարելագործումը և հանգես գալու ոչ միայն գրամաշնորհներ շահողի, այլև գրամաշնորհներ տվողի դերում: Մի՞թե այդպես չեն ապահովում իրենց առաջընթացն աշխարհի զարգացած բազմաթիվ երկրների գիտական կենտրոնները: Հետևաբար, մենք պետք է լրջորեն մտածենք այս հարցում արմատական շրջադարձ կատարելու ուղղությամբ: Այս առումով ԳԱԱ պրեզիդենտը մատնանշեց բարենպաստ որոշակի դրույթներ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում: Սակայն գիտական կազմակերպությունների ինովացիոն գործունեությունը, նշեց նա, կարելի է ապահովել ակադեմիական ինստիտուտների և կիրառական ուղղվածություն ունեցող գիտաարտադրական կազմակերպությունների միջև սերտ, հոլդինգներին բնորոշ համագործակցություն ստեղծելով: ԳԱԱ-ն այս ուղղությամբ արդեն որոշակի քայլեր ձեռնարկել է, մասնավորապես՝ հոլդինգային տիպի համագործակցություն է ձևավորվում ՀՀ ԳԱԱ օրգանական քիմիայի և ՀՀ առևտրի ու տնտեսական զարգացման նախարարության կիրառական քիմիայի ինստիտուտների միջև: Արդյունքում ակնկալվում է ունենալ քիմիական նյութերի փոքր արտադրություն:

Անհրաժեշտ է նշել, ասաց զեկուցողը, որ չնայած բոլոր դժվարություններին 2004 թ. հաջողվել է ամրապնդել և զարգացնել միջազգային կապերը, առանց որի անհնար է ապահովել գիտության զարգացման անհրաժեշտ մակարդակը: Այսպես, ԳԱԱ համակարգի 354 գիտնական այցելել է արտասահմանյան 40 երկիր, այդ թվում՝ գիտական միջոցառումներին մասնակցելու համար՝ 162, գիտահետազոտական համատեղ աշխատանք կատարելու համար՝ 154, բանակցությունների և քննարկումների համար՝ 38 գիտնական:

Հաշվետու տարում ԳԱԱ գիտնականները մասնակցել և զեկուցումներով հանդես են եկել արտասահմանյան երկրներում անցկացված միջազգային և տարածաշրջանային մի շարք միջոցառումների, որոնցից կարելի է նշել հայ և գերմանական միջնադարյան գրականությանը նվիրված միջազգային գիտաժողովը Գերմանիայում, «Նոր միջուկային էներգետիկ համակարգեր» միջազգային գիտաժողովը Տոկիոյում (Ճապոնիա), «Եվրագիտություն 2004» բաց հավաքը Ստոկհոլմում (Շվեդիա), ցանցային տեխնոլոգիաներին նվիրված գիտաժողովը Բուդապեշտում (Հունգարիա), Միջազգային երկրաբանական 32-րդ համաժողովը Ֆլորենցիայում (Իտալիա) և այլն:

Միջազգային կարևոր գիտաժողովներ են կազմակերպվել ինչպես Երևանում, այնպես էլ Հայաստանի տարբեր քաղաքներում (Ծաղկաձորում, Բյուրականում, Գյումրիում)՝ ընդգրկելով գիտության համարյա բոլոր ասպարեզները: ԳԱԱ-ն անմիջական մասնակցություն ունի Ցեղասպանության 90-րդ տարելիցին, Մեսրոպյան գրերի 1600-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման աշխատանքներին:

ՀՀ ԳԱԱ հաստատություններն ընդունել են արտասահմանյան 309 գիտնականի 30 երկրներից, այդ թվում՝ միջազգային գիտաժողովների մասնակցելու համար՝ 105, գիտական համատեղ աշխատանք կատարելու համար՝ 102, կոնսուլտացիաների և համագործակցության հարցեր քննարկելու համար՝ 102 գիտնականի:

Այնուհետև ԳԱԱ պրեզիդենտն անդրադարձավ հետազոտություններ կատարելու ուղղությամբ համակարգի ստացած դրամաշնորհներին, նշեց, որ դրանք օգնել են ակադեմիային միջազգային գիտաժողովներ, սեմինարներ, գործուղումներ և որոշ այլ միջոցառումներ կազմակերպելու գործում:

Գիտական հիմնախնդիրները լուծելու համար կարևորագույն նշանակություն ունի ինստիտուտները գիտական սարքավորումներով ապահովելու հարցը, շարունակեց Ֆ. Սարգսյանը: Հասկանալի է, որ այս խնդիրն անհնար է լուծել բյուջեով ԳԱԱ-ին տրամադրվող միջոցներով, և ինստիտուտներն աշխատում են այդ սարքավորումները ձեռք բերել դրամաշնորհների միջոցով:

2004 թ. Կառավարությունը մեծ օգնություն ցուցաբերեց ԳԱԱ-ին՝ իր պահուստային ֆոնդից հատկացնելով 127 մլն դրամ: Այդ օգնությամբ հաջողվեց հիմնովին վերանորոգել ԳԱԱ նախագահության, հիմնարար գիտական գրադարանի և գիտահետազոտական 8 ինստիտուտների ջեռուցման կաթսաները, ցանցերը, տանիքների մի մասը: Կառուցվեցին նաև 5 ինստիտուտների ջեռուցման ցանցեր, տեղադրվեցին նոր կաթսաներ, կա-

տարվեցին ամենաանհրաժեշտ վերանորոգման աշխատանքներ: Սակայն ֆինանսների պակասության պատճառով աշխատանքների մեծ մասը չավարտվեց: Այս հարցում հույսեր ենք կապում ՀՀ կառավարության շտապ օգնության հետ:

Ակադեմիան, ասաց ԳԱԱ պրեզիդենտը, գիտական կենտրոն լինելուց բացի, նաև կադրերի պատրաստման դարբնոց է: Այժմ ասպիրանտուրայում 77 մասնագիտությունների գծով սովորում է 306 ասպիրանտ: Տարեկան 30–40 ասպիրանտներ և հայցորդներ պաշտպանում են թեկնածուական ատենախոսություն, բայց, դժբախտաբար, նրանց մեծ մասը հայտնի պատճառներով չի մնում աշխատելու գիտության ոլորտում: Ի դեպ, ԳԱԱ դիտակրթական միջազգային կենտրոնում այս տարվանից գործում է մագիստրատուրայի համակարգ, որի նպատակը կրթությունից դեպի գիտական գործունեության անցման գործընթացն արագացնելն է:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը վերջերս լսեց երիտասարդ մասնագետների հետ տարվող աշխատանքների ընթացքը և այն բարելավելու նպատակով կայացրեց համապատասխան որոշում: Այդ հարցի կարևորությունը դժվար է գերադնահատել: Այժմ ԳԱԱ-ն ունի 777 երիտասարդ մասնագետ (մինչև 35 տարեկան), որից 130-ը՝ գիտական կոչումով: Դա խոսում է այն մասին, որ երիտասարդների մոտ դեռևս պահպանվել է ձգտումը դեպի գիտությունը, և մենք պարտավոր ենք քաջալերել նրանց՝ առաջին հերթին համապատասխան աշխատանքային պայմաններ ստեղծելով:

Որպես դրական արդյունք պետք է նշել, որ 2004 թ., չնայած գոյություն ունեցող դժվարություններին, ԳԱԱ բոլոր ամսագրերը ժամանակին լույս են տեսել: Տպագրվել է 126 անուն դիրք, որից 4-ը՝ դասագիրք, աշխարհի գիտական տարբեր ամսագրերում հրատարակվել է մի քանի հազար հոդված:

Վերջում ԳԱԱ պրեզիդենտն ասաց, որ ակադեմիան Կառավարության հանձնարարությամբ առաջարկություններ է մշակում՝ ուղղված երկրում գիտական աշխատանքների կատարման պայմանների օպտիմալացմանը և կատարվող աշխատանքների արդյունքների օգտագործման առավել ճկուն, ռացիոնալ համակարգի ստեղծմանը:

Հաշվետու ժողովին հայրապետական իր օրհնանքն էր հղել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը. Ուղերձում նա գնահատում էր գիտության նվիրյալների անխոնջ ջանքերն ու վեհ առաքելությունը: «Առավել ղնահատելի են այդ հաջողությունները, երբ գիտության զարգացման համար Հայաստանում լիարժեք չեն պայմանները»,– ասված էր ուղերձում: Գիտությունը համարելով Աստծո պարգև, իսկ այն մարդկանց կարիքներին ծառայեցնելը՝ աստվածահաճո գործ, Վեհափառը համոզված է, որ ակադեմիայի տասնամյակների ժառանգությունը և ավանդները նոր բարի արդյունքներ ու հաղթանակներ են բերելու մեր ժողովրդին ու հայրենիքին:

ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս քարտուղար Է. Ղազարյանը հանդես եկավ «ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովի և նախագահության գործունեությունը: Գիտության և կրթության ինտեգրման խորացում» զեկուցումով: Հաշվետու տարում կայացել է 4 ընդհանուր ժողով, ԳԱԱ նախագա-

հությունն անց է կացրել 37 նիստ, որտեղ քննարկվել է շուրջ 90 հարց. ասաց նա և հանգամանորեն ներկայացրեց կատարված աշխատանքը:

Կառավարության վերաբերմունքը գիտության նկատմամբ, չնայած դանդաղ, բայց փոխվում է դեպի դրականը, շարունակեց զեկուցողը: ԳԱԱ նախագահության կողմից ներկայացված գիտության հիմնախնդիրների վերաբերյալ բոլոր առաջարկությունները, այդ թվում նաև գիտության զարգացման հայեցակարգն, ընդգրկվել են Կառավարության գործունեության 2005 թ. ծրագրերում: Է. Ղազարյանն անդրադարձավ, այսպես կոչված, «կեղծ գիտության» դեմ պայքարի անհրաժեշտությանը: Անցնելով համակարգի ֆինանսավորման հիմնախնդիրներին՝ ներկայացրեց 2004 թ. պետական բյուջեից հատկացված գումարների վերաբերյալ վիճակագրական որոշ տվյալներ: Այսպես, 2004 թ. տվյալներով ֆինանսավորումը կազմել է 1 մլրդ 939 մլն դրամ, ինչը 271 մլն դրամի չափով (14 տոկոսով) գերազանցում է 2003 թ. մակարդակը: Մեկ աշխատողին ընկնող միջին տարեկան ծախսը կազմել է 488 հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ համարյա փոփոխության չի ենթարկվել: Մեկ աշխատողի միջին տարեկան աշխատավարձը կազմել է 217 հազ. դրամ (ամսականը՝ 18 հազ. դրամ): Նախորդ տարվա համեմատությամբ այն բարձր է 1900 դրամով: Բացի բյուջետային նշված ֆինանսավորումից, գիտահետազոտական աշխատանքների կատարման համար աղբյուր են հանդիսացել նաև ինստիտուտների արտաբյուջետային մուտքերը՝ 323 մլն դրամի չափով:

2004 թ., ասաց ԳԱԱ փոխպրեզիդենտը, գիտության ֆինանսավորման ոլորտում իրականացված դրական տեղաշարժերի շարքում առանձնահատուկ պետք է նշել՝ դիտական կոչումների համար հավելավճարի տրամադրումը, Կառավարության կողմից գիտության և տեխնիկայի գերակա ուղղությունների շրջանակներում առաջին անգամ իրականացված պետական նպատակային ծրագրերի ֆինանսավորումը: 2004 թ. ֆինանսավորվել է չորս ծրագիր, որոնց ֆինանսավորման ընդհանուր գումարը կազմել է 123 մլն դրամ: Դրանք են՝ «Հայոց պատմություն» բազմահատորյակի ստեղծում և տպագրություն (ռուսերեն), Կիսահաղորդչային նանոէլեկտրոնիկա, ՀՀ պետական գիտական հաշվողական համակարգի ստեղծում, Բնական հումքից նոր նյութերի ստացում:

Այնուհետև ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս քարտուղարը խոսելով դիտական աստիճանների համար նախատեսված հավելավճարների և պետական նպատակային ծրագրերի մասին, նշեց, որ հարկ է մեծացնել այդ ուղղություններով պետական ֆինանսավորման ծավալները:

Ինչպես արդեն նշվեց, շարունակեց զեկուցողը, վերջին տարիների կարևորագույն ձեռքբերում պետք է համարել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որում ամրագրվեց երկրի գիտական համակարգում Գիտությունների ազգային ակադեմիայի տեղն ու դերը: Ակադեմիայի համար կարևորագույն խնդիր է այդ մայր օրենքից, ինչպես նաև այլ ենթաօրենսդրական ակտերից և նորմատիվային փաստաթղթերից բխող գործողությունների անվերապահ կատարումը: Սակայն, ըստ էության, չեն կատարվում օրենքի մի շարք դրույթներ, մասնավորապես, այնպիսի կարևորագույն դրույթ, ինչպիսին է գիտական

և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորումը: Սկսած 2002 թ. պետությունը գիտությանը միջոցներ է հատկացնում պետական բյուջեի տարեկան ծախսային մասի երեք տոկոսի փոխարեն մեկ տոկոսի չափով: Անհրաժեշտ է հարդել օրենքը և գիտնականներին չտրամադրել օրենքների նկատմամբ թերահավատության, ասաց նա:

Է. Ղազարյանը վերջում նշեց, որ ակադեմիային չի հաջողվել հարկ եղածի չափով կանգնեցնել համակարգի կադրերի ծերացման վտանգավոր միտումը. ակադեմիկոսների միջին տարիքը կազմում է 74 տարի, թղթակից անդամներինը՝ 68, գիտությունների դոկտորներինը՝ 65: Միգուցե այդ գործընթացին կնպաստի թղթակից անդամների ընտրության տարիքային սահմանափակումը, ասաց նա, բայց դրա համար կպահանջվեն կանոնադրական համապատասխան փոփոխություններ:

Տարեկան ընդհանուր ժողովում ելույթ ունեցավ ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանը: Նա ասաց, որ ակադեմիան համարվում է պետության պաշտոնական խորհրդատուն գիտության առումով: Այն խզումը, որ առաջացել է պետություն-գիտություն-արտադրություն, մինչև անգամ բուհ հատվածում, նաև ակադեմիայից է գալիս, որովհետև վերջինս ուզում է գիտությանը նայել իր տեսակետից: Ըստ վարչապետի, ոչ միայն ակադեմիական բարեփոխումներ են անհրաժեշտ, այլև դիտական: Կարևորելով բուհական գիտությունը, նշեց, որ այն դուրս է ակադեմիայի ուշադրությունից: Ա. Մարգարյանի դիտարկմամբ՝ ակադեմիայում առկա է հոգնածության սինդրոմը, ինչը կարելի է բացատրել նաև ակադեմիայի տնօրենների մեծ մասի տարիքով: Գեղեցիկ խոսքերից ավելի կարևոր է գործ անելը, երիտասարդներին տեղ տալը, ասաց նա: Այս առումով պետությունն առաջին քայլն արել է. այս տարի բյուջեում 206 մլն դրամ է հատկացված գիտական աստիճանների ֆինանսավորման համար: Երբ ասում ենք՝ բարեփոխումներ ենք անելու, չպետք է մտածել, թե միայն ինստիտուտ ենք փակելու, տնօրեն ենք փոխելու, այլ արմատական վերափոխման անհրաժեշտություն է առաջացել, ասաց վարչապետը: Գիտության ոլորտում բարեփոխումները ևս մտնում են Եվրամիության առջև մեր երկրի ստանձնած պարտավորությունների մեջ:

Անդրադառնալով ֆինանսավորման խնդրին՝ Ա. Մարգարյանն ասաց, որ 2003 թ. գիտությանը հատկացվել է 2 մլրդ 960 մլն դրամ, 2004-ին՝ 3 մլրդ 321 մլն դրամ, 2005-ին՝ 4 մլրդ 102 մլն դրամ: Տասից ավելի նպատակային ծրագրեր են ներկայացվել, մենք շարունակում ենք չորսը ֆինանսավորել, որովհետև դրանք շարունակական են: Վարչապետի մեկնաբանությամբ՝ ֆինանսավորման անհամամասնության պատճառը ծրագրի բացակայությունն է. «Մենք չունենք ծրագիր: Զգիտենք, թե ինչ ենք ուզում: Այն ութ գերակա ուղղությունները, որ ընդունել ենք, արդյունքն ի՞նչ է լինելու 2 տարի հետո, 5 տարի կամ 15 տարի հետո»: Ա. Մարգարյանն ասաց, որ կողմ չէ այդ գերակա ուղղությունների թիվը կրճատելուն, ինչպիսի առաջարկություն եղել է նախորդ օրը Ազգային ժողովում կազմակերպված խորհրդարանական լսումների ժամանակ: Նաև համաձայն չէ այն տեսակետին, թե օրենքը խանգարում է գիտություն-կապիտալ հարաբերությունների ձևավորմանը: Եթե պետք է կանոնադրության մեջ մի

տող փոխել, ապա դրա հնարավորությունը կա. ԳԱԱ պրեզիդենտը կարող է նման առաջարկություն անել Կառավարության ցանկացած նիստի ժամանակ: Այսօր ակադեմիան, վերջում ասաց վարչապետը, ինքը պիտի լինի բարեփոխումների նախաձեռնողը:

Զեկուցումների շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն: Հանդես եկան ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Հ. Ներսիսյանը, Ռ. Մարտիրոսյանը, Ա. Մկրտչյանը, Ս. Համբարձումյանը, Կ. Ղարագյոզյանը, Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի ռեկտոր Ա. Թարվերդյանը, ԳԱԱ օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն Գ. Հասրաթյանը: ԳԱԱ հիմնարար գիտական դրադարանի տնօրեն, ակադեմիկոս Հ. Ներսիսյանն առաջարկեց չեղյալ հայտարարել մեկ տարի առաջ տեղի ունեցած ԳԱԱ պրեզիդենտի ընտրությունը և նախագահության նախորդ տարվա կատարած աշխատանքը գնահատել անբավարար: Հարցի քննարկումը դրվեց քվեարկության և մերժվեց: Քվեարկության դրվեց նաև ԳԱԱ նախագահության կատարած աշխատանքը և կատարված աշխատանքին հավանություն տրվեց:

ՀՀ ԳԱԱ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 25-ին ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովը: «Բաժանմունքի 2004 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները» զեկուցումով հանդես եկավ ԳԱԱ փոխպրեզիդենտ, բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը: Նա մասնավորապես ասաց, որ հաշվետու տարում անցկացվել է բաժանմունքի 5 ընդհանուր ժողով, բյուրոյի 21 նիստ, ապա խոսեց դրանցում քննարկված հարցերի մասին: Նշեց, որ բաժանմունքի կազմում ընդգրկված են ԳԱԱ 17 ակադեմիկոս և 3 թղթակից անդամ, բաժանմունքին առընթեր գործում են Պատմական գիտությունների, Տնտեսագիտության, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավագիտության, Բանասիրության և արվեստագիտության դիտական խորհուրդները: Զեկուցողը հանգամանորեն անդրադարձավ բաժանմունքի կազմում ընդգրկված ինստիտուտների և կառույցների գործունեությանը, նշեց, որ գիտական կազմակերպություններում կատարվել է պետբյուջեից ֆինանսավորվող 114 թեմա, տնտեսական պայմանագրով՝ 1 թեմա, դրամաշնորհով՝ 2 թեմա: Այնուհետև Վ. Բարխուդարյանն անդրադարձավ հայագիտության առջև ծառացած խնդիրներին:

Ասպիրանտների և երիտասարդ գիտաշխատողների հետ տարվող աշխատանքը, շարունակեց զեկուցողը, մշտապես գտնվել է բաժանմունքի բյուրոյի և բաժանմունքի հիմնարկությունների ղեկավարների ու գիտական խորհուրդների ուշադրության կենտրոնում: Հաշվետու տարում ատենախոսությունը ժամանակին պաշտպանել է 17 ասպիրանտ: Թեև 23 երիտասարդ գիտաշխատողներ աշխատանքի են ընդունվել բաժանմունքի հիմնարկություններում (որոնցից 11-ը՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում), այնուամենայնիվ հույժ կարևոր խնդիր է ասպիրանտու-

ման ավարտելուց հետո ասպիրանտին աշխատանքի տեղավորելը, ինչը հնարավոր է միայն լրացուցիչ ֆինանսավորում ստանալու պարագայում: Անհրաժեշտ է ասպիրանտական տեղերը բաշխելիս հաշվի առնել այդ հանգամանքը և նախատեսել նաև ապագայում աշխատանքի ընդունման հնարավորություն ու միջոցներ:

Արդյունավետորեն շարունակվել և ընդլայնվել են բաժանմունքի ինստիտուտների միջազգային գիտական կապերը, ասաց Վ. Բարխուդարյանը: Հայաստանում և արտերկրում կազմակերպվել է միջազգային 3 գիտաժողով: Բազմաթիվ գիտաշխատողներ գիտական գործուղման են մեկնել արտասահմանյան երկրներ, ինստիտուտներում տարբեր երկրներից հյուրընկալվել են մի շարք գիտնականներ:

Հաշվետու տարում բաժանմունքի հիմնարկների գիտաշխատողները ԳԱԱ և արտաակադեմիական հրատարակչությունների միջոցով հրատարակել են 102 աշխատություն, որից 3-ը արտասահմանում, 4 դասագիրք և ձեռնարկ, 750 հոդված, որից 99-ը արտասահմանում: Բաժանմունքի գծով հրատարակվում են «Պատմա-բանասիրական հանդես» և «Լրաբեր հասարակական գիտությունների» պարբերականները:

Բաժանմունքի բոլոր հիմնարկություններում, նշեց զեկուցողը, առկա են ժամանակակից տեխնիկական սարքավորումների, դիտական նոր գրականության ձեռքբերման և նյութատեխնիկական բազայի ամրապնդման խնդիրները: Խիստ անբավարար է ավարտված աշխատանքների հրատարակության խնդիրը: Դրամաշնորհների և այլ ճանապարհներով առանձին հեղինակների կողմից ձեռք բերված միջոցներով հրատարակման եղանակը հնարավորություն է տալիս շրջանառության մեջ դնել նաև ոչ բարձրարժեք աշխատություններ: Ինստիտուտները պետք է ունենան լրացուցիչ ֆինանսական միջոցներ հրատապ, կարևոր և բարձրարժեք աշխատությունները հրատարակելու համար: Լուծման կարիք ունի գործուղումների խնդիրը: Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով գիտնականները զրկված են արտասահմանյան գիտական կարևոր միջոցառումներին մասնակցելու և աշխարհի առաջատար գիտական կենտրոններում վերապատրաստվելու հնարավորությունից: Դրամաշնորհների միջոցով գործուղումները թեև կարևոր, բայց բավարար չեն այս խնդրի լուծման համար:

Զեկուցումից հետո ծավալվեց քննարկում, բաժանմունքի 2004 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեությունը գնահատվեց դրական:

Բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովում լսվեց նաև ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամի թեկնածություն առաջադրելու մասին հարցը: Առաջադրվեց միջազգային իրավունքի գծով անվանի գիտնական Յու. Բարսեղովի (Մոսկվա) թեկնածությունը, որը և հաստատվեց բաց քվեարկությամբ: